պետի վանաց եղեալ են 'ի վերայ հիման գործարանի օ-
ճառին, սեփհականութեան այլազգեաց, պատուիրել մի-
աբանացն Հայոց կարճել զձեռս իւրեանց անտի։ Իսկ Խա-
չատուր եպիսկոպոս, որ փոխանորդ էր յայնժամ Եղիա-
զարու, չոքաւ առ դատաւորն՝ և առաջի արար զվաւե-
րական գրեանս զոր ունէր վասն այնր, և նանրացոյց զամ-
բաստանութիւնս նոցին եւ եցոյց Հրեշտակապետի վանաց
լեալ 'ի ձեռս Հայոց 'ի վաղ ժամանակաց անտի, և ոչ ե-
դեալ հիմն 'ի վերայ գործարանի օճառի։ Եւ 'ի չհամիլ
ընդ այն ամբաստանողաց՝ եկին բազմութեամբ 'ի քննու-
թիւն տեղւոյն, և դարձ արարեալ առ դատաւորն պատ-
մեցին թէ 'ի զուր են ամբաստանութիւնք այլազգեաց, և
նա յետ խափանելոյ զհակառակութիւնս նոցա, վերստին
հաստատեաց զիրաւունս Հայոց, \•ՌԷ (1673)։

Դատաւորն Երուսաղէմի՝ որ այն ինչ եկեալ էր՝ և կա-
մէր երթալ յուխտ 'ի Բեթղեհէմ, և անտի 'ի Քեբրոն 'ի
գերեզման Հայր Աբրահամու՝ ըստ սովորութեան իւրեանց,
ոմանք յայլազգեաց մատուցեալ առ նա՝ ամբաստան եղեն
զմիաբանացն Հայոց, բարուրանս եղեալ 'ի վերայ նոցա.
իբր թէ հակառակ օրինաց նոցին չինեալ իցեն նոր եկե-
ղեցիս 'ի գիւղն Բեթղեհէմի 'ի վանս իւրեանց, և կախեալ
անդ զկանթեղս և զպատկերս, և զարդարեալ եկեղեցա-
կան սպասուք՝ կատարել զօրէնս իւրեանց։ Իբրեւ լուաւ
դատաւորն զայսոսիկ՝ շարժեցաւ 'ի նախանձ մեծ, և տագ-
նապեալ ոգւով աճապարեալ փութաց 'ի պաշտպանութիւն
օրինաց։ Սակայն առաքեաց նախ զփոխանորդ իւր և զմ-
ման յայլազգեաց 'ի Բեթղեհէմ, քննել եւ իմանալ զե-
ղեալսն և բերել զրոյց առ ինքն. հասին նոքա անդ՝ ուր
էր և Խաչատուր եպիսկոպոս փոխանորդ Եղիազարու, եւ
տեսին զեկեղեցին՝ զոր չինեալ էր Դրիգոր Պարոն Տէր,
և զորմն նորա կարի հնագոյն, և դարձեալ անտի պատ-
մեցին դատաւորին. իսկ նա վերստին եհարց զԽաչատուր
վասն եկեղեցւոյն այնմիկ, և նորա պատասխանի արարեալ
ասէ, 'ի սկզբանէ անտի սահմանեալ է այն 'ի պէտս աղ-
թից մերոց, որպէս գիտեն ամենայն այլազգիք քաղաքիս՝
և նա խնդրեաց առ այս վկայս յայլազգեաց, և նորա ժո-
ղովեալ զգլխաւորս նոցին յԵրուսաղէմէ և 'ի Բեթղեհէմ,